

«Արժանագրութիւն Արմաւրի վերաբերի առ հնա-
զոյն Հայկական զիրս, զորս թէեւ մարթ է ընթեո-
նուլ (այրուքինն գոյով նոյն եւ նման Ասորականին).
բայց զժուարիմանալիք են յոյժ ի սրտմառս զը-
ժուարահաս գոյոյ լեզուին այնորիկ եւ Բերականու-
թեանն:

«Յարժանագրութեան յայտմարկ ես տեսանեմ զեր-
կուս յատուկ անուանս եւ եթ, Հ-Ն-Ն-Է-Բ-Բ-Բ-Է և
Ն-Ն-Ն-Բ-Բ-Բ-Է, բայց սորա չեն անուանք թաղաւո-
րաց եւ արժանագրութիւնն նոյնպէս չէ պատմական,
այլ մասնաւոր ինչ վէպ — անշուշտ — ինչ — եւ պատ-
կանի (որպէս հաւաստի ի զրոյն ծեւակերպութենէ)
եռթներորդ դարուն նախ քան զճնոնդն Յիսուսի
Քրիստոսի, որպէս եւ արժանագրութիւնքն Վանայ:»

Ուստի ցաւիմ յոյժ զի չկարեմ առարել առ Ձեզ
զթարգմանութիւն արժանագրութեան՝ զոր կարելի
էամարէի առնել:

Որդին իմ ձայնակից է ընդ իս ի շնորհակարու-
թեան վասն սրտողին հիւրընկալութեան, զոր արա-
րիք մեզ, եւ զորմէ ի մտի կալեալ եմք զամենա-
յաղցր յիշտակ:

Պատիւ ունիմ լինել, Տէր,

Ձեր ամենախոնարհ ծառայ

Ա. ԳԻՆՆԵՐՏ

Անկամ փարլամենթի:

“The Inscription from Armovir belongs to the primitive Armenian series, which although legible (as the Alphabet is the same as the Assyrian) are hardly intelligible, the language and grammar being exceedingly difficult to make out. The only two names I see on this Tablet are HAZANI-KURNI and NUNUDAÉ — but these are not names of Kings, nor is the Inscription historical — it is one private record — probably a vow — and dates (as is proved by the character) from the 7-th Centurg. B. C. — It is of the same age indeed as the Inscription of Van.”

I am very sorry therefore that I am unable to send you the translation of the Inscription which I had hoped I might have been able to do.

My Son joins with me in many thank for the kindness and hospitality which we received at your hands, of which we retain a most pleasant recollection.

I have the honor to be Sir,

W. most abedient Servant

A. KINNAIRD

M. P.

ՍՈՒՐՀԱՆԳԱԿՔ ԲԵԻԶԱՆԴԵԱՆ.

Ինչպէս անցեալ թուով տեղեկութիւն
առած էինք, ահաւասիկ ներկայէս կյա-
րեմք՝ հանդերձ յառաջաբանութեամբն
միով՝ Աւետիք Պատրիարքի ինքնագիր
կենսագրութիւնը հաղորդել մեր ընթեր-
ցողաց, միանգամայն կյիշեցնեմք՝ զի ի
տեղիս տեղիս Ազգութեաց բռնութեանց
և ճնշմանց ներքեւ պարբերութիւնք յա-
ւելանալոյն նշաններ պարզ են՝ երբ յառ-
կապէս շարադրութեան և պատմական
ընթացքին խորին ու շաղրութիւն տրուի:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԵՏՏԻՔ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՀԱՅՈՑ.

Փայլելի Արարչի Պարթոյ զէնանէլէն
հանաւ.

Յառաջաբան հրատարակին.

Եթէ երբեք եղած է կեանք մը, որ ամենամեծ
և ամենատարօրինակ յեղականութիւններով,
փառաւոր բարձրացմամբ՝ ինչպէս նաև սարսա-
փելի կործանմամբ նշանաւոր ըլլայ, հոչակաւ որ

Աւետիք Պատրիարքին կեանքն է։ Բազմն անոր աւելի եղբրերգական նկարագիր մը տալու համար ուզեց որ պահ մը Երկամէ Գիմակին պատմութեան զիցադն ալ ըլլայ։

1657ին Եւթովիա քաղաքը ծնած, խոնարհ վիճակի մը մէջ, իր հօրն արհեստը գործելու կը կոչուի, և նոյն քաղաքէն օրիորդի մը հետ ալ կը նշանուի։ Բայց իր կոչումն յանկարծ կը փոխուի և նոր կեանք մը կը բացուի իր առջև։ Յակոր անուն վարդապետ մը կը հասնի յԵւթովիա, Աւետիք պատանին անոր կաշակերտի և անոր ձեռքին տակ ուսանելով՝ բաւական կրթութիւն ետե՛ն՝ նախ սարկաւազ, յետոյ վարդապետ և քանի մը տարի ետքը ալ Զուղայեցի Յակոր Պաթովիկոսէն եւ պիսկոպոս կը ձեռնադրուի։ Երգնկայի մէջ Ժամանակ մը կենալով առիթ կուեննայ տեղւոյն Ֆէղուլահ անուն դատաւորին (Գատր) հետ ծանօթանալու։ Այս անձն յետոյ Շէյխ - իւլ - Իսլամ և Ա. Սուլթան Մուստաֆայի սիրելին ըլլալով, Երգնկայի հին բարեկամը յիշեց և անոր շնորհիւ Աւետիք եպիսկոպոսը Կ. Պօլսոյ և Երուսաղէմայ Հայոց Պատրիարք ընտրուեցաւ, և այս երկու աթոռներն իր իշխանութեան ներքեւ միացուց։ Իր գործունեայ ձեռներէց և անհանդարտ բնաւորութիւնը շատ չանցաւ բազմակիւ թշնամի հանեց իր դէմ՝ ազգին երեւեկաց մէջէն, բայց Ժողովուրդն իր կողմն էր։ Գաղղիացոց այն Ժամանակի ղեկավարը, Պ. Ֆէրիօլ, որ Օսմանեան արքունեաց քով ըրած տարօրինակ գործերովն և Այլէ աւելի չքնադագեղ չէլքէզուհւոյ հետ ունեցած յարաբերութեամբն հռչակաւոր եղած է։ Աւետիք Պատրիարքին դէմ՝ ելաւ կաթողիկոսները հալածելու ամբաստանութեամբ, և այս պատճառաւ իրարու դէմ՝ մեքենայութեանց մրցում մ' և խոր ատկութիւնն հաստատեցաւ մէջերնին։ Պ. Ֆէրիօլ Աւետիք Պատրիարքին երդուեալ թշնամի ըլլալով, զայն տապալելու համար ամեն հնարք ի գործ դրաւ։ Երկու անգամ պատրիարքութենէ ձգել և յաքսոր դատապարտել տուաւ Բ. Գրան ձեռօք, բայց իր վրէժխնդրութիւնը այնչափով գոհ չեղաւ։ Ուստի զայն բոլորովին անհետացնելու հնարք մը խորհեցաւ։ Աւետիք Չամուշի մը հսկողութեամբ Կիպրոս կղզին արքսոր երթալու հա-

մար ծամբայ եղնելով, Տենեդոս (Պօհճայ առա) կղզին հանդիպեցաւ։ Հոն փոքրիկ նաւ մը գալով առաջարկեց Կիպրոս տանիլ զինքը։ Աւետիք չամուշին հետ այն նաւը նստաւ։ Բայց այն նաւը Գաղղիոյ ղեկավարը վարձած էր, և նաւապետն ալ անոր հրամանին ներքեւ ըլլալով գաղտնի հրահանգ ստացած էր։ Շուուշն ստակով կաշառուած էր։ Աւետիք՝ առանց կասկածելու այն նաւը նստաւ։ Բայց նաւը փոխանակ գէպի Կիպրոս երթալու, Քիոս կղզւոյն ձանքան բռնեց։ Հազիւ նաւը Քիոսի նաւահանգիստը հասաւ, և ահա Գաղղիոյ հիւպատոսը գրաւոր հրաման մը ի ձեռին ներկայացաւ և Աւետիք Պատրիարքը բռնելով՝ ուրիշ նաւ մը փոխադրեց, որ անմիջապէս Մէսինայի (Սիկիլիա) նաւահանգստին ձանքան բռնեց։ Գաղղիոյ փոխ հիւպատոս Բօլ Սուլիէ՝ հոն սպասելով, նաւը հասնելուն պէս, Աւետիք Պատրիարքը բռնեց հաւատաքննութեան բանտը գրաւ և այսպէս այն ահաւոր ատեանին խօտութեան մատնեց զայն։ Սակայն յետոյ Փարիզէն հրաման գալով որ Գաղղիա ղրկեն, Սուլիէ՝ Ժուֆրօս անուն գաղղիացի նաւապետի մը նաւով Գաղղիա ղրկեց։ Հայոց Պատրիարքը Մարսիլիա հասնելուն պէս արքունի թիարանին վերատեսուչ Պ. Մօնմօրի յանձնուեցաւ, որ անոր վրայ գտնուած բոլոր թուղթերը առնելէ ետեւ նաւարանին ղեղանք դրաւ զայն։

Սակայն Աւետիք Պատրիարքին յափշտակութեան լուրը Կ. Պօլսոյ մէջ տարածուելով, բարեկամներն աղերսադիր տուին Մեծ — Եպարքոսին՝ աղաչելով որ Գաղղիոյ կառավարութենէն պահանջէ, միանգամայն Հայերը լրտեսներ ղրկեցին Միջերկրականի ամեն նաւահանգիստներն՝ իրենց տարաբաղդ պատրիարքը գտնելու։ Լուի ԺԳ հասկնալով որ այս յափշտակութեամբ իր ղեկավարն աղգաց իրաւունքը բռնաբարած էր, և չուզելով զայն Թուրքաց առջև պատուախանայտու ձգել, միւս կողմանէ Հայոց ըրած բոլոր խուզարկութիւններն ի դերեւ հանելու փափաքելով, իր որսը գաղտնաբար Գաղղիոյ միւս ծայրը Սէն — Միշէլ լերան մենաստանը փոխադրել տուաւ, որ Պենեգիկտեան կրօնաւորաց սեփականութիւնն էր, և պետական բանտի տեղ կ'ծառայէր այն Ժա-

մանակ, Աւետիք այն անթափանցելի մենարանին մէջ երեք տարի ծածուկ պահուեցաւ: Յետոյ ուտիկանութեան զործակալներ գնացին վերուցին զայն անկէ և դոց կտրի մէջ դրած Փարիզ տարին և Պասթիլի բերդին մէջ փակեցին: Աւետիք տարիի մը չափ այն ահաւոր բերդին մէջ մնաց, ամեն հաղորդակցութենէ զուրկ: Իր քով երթալու արտօնութիւն ունէին միայն թագաւորին արեւելեան լեզուաց քարտուղար — թարգման Բրժի Տրլա Քոօա և Հայր Էօղէպ Ռընօտօ: Վերջինին պաշտօնն էր հռովմէական կաթողիկ կրօնին վարդապետութիւններն ուսուցանել Աւետիքի և Հայաստանեայց եկեղեցին ուրանալու պատրաստել: Դժբաղդ բանտարկեալը վերջապէս 1710 սեպտեմբերի մէջ ուրացաւ իր եկեղեցին Փարիզի արքեպիսկոպոս Տր'նօայլ կարդինսին առջև: Այսպէս հաշտուելով Հռովմէական եկեղեցւոյ հետ, Աւետիք պատրիարք շղթայէն ազատուեցաւ:

Բանտէն հանուելով Բրժի Տրլա Քոօայի տունը փոխադրուեցաւ Սէն—Սիլվիս եկեղեցւոյն մօտ Ռիւ Քէրոս փողոցը, և անոր խնամոց և հսկողութեան յանձնուեցաւ: Այն տան մէջ կապիւր Աւետիք և աղատութիւն ունէր Փարիզի մէջ պարտելու: Երբեք եկեղեցի կերթար, և ամեն կիրակի պատարագ կընէր Բոպիկ Կարմէնեանց մատուռին մէջ: Իր սիրելի շրջագայութեան տեղն էր Բուսարանական պարտէզն, ուր կերթար և բժշկութեան օգտակար տունկիրը զննելով կըզբանուր: Հռովմ' երթալու փափաքելով՝ թագաւորէն թոյլտուութիւն խնդրեց, Պապին ալ գիր գրելով ապաստան մը խնդրեց անոր մօտ, բայց մահը վրայ հասաւ կարճ հիւանդութեամբ մը 1711 յուլիս 11 ին, և հանդիսաւոր յուղարկուելու թեմայի թաղուեցաւ Սէն—Սիլվիս եկեղեցւոյ դամբարանին մէջ*): Վրան դրուած տապանաքարը, որոյ վրայ Աւետիք անունն ու հանգստեան տեղը արձանագրուած է:

(*) Լրագրոյն նախընթաց թուոյն մէջի երեսին հինգերորդ էջին մէջ ուր նշուած էր Արեւելեան լեզուաց թարգման Բրժի Տրլա Քոօայի տունը թաղուելը և խօսքը պէտք է կարդայի որ Արեւելեան լեզուաց արքեպիսկոպոս Բրժի Տրլա Քոօայի տունը դրուելով մինչև ցմառ հոն կենալը:

մալքը դրուած էին, 1793ի յեղափոխութեան ժամանակ վերցաւ: Բայց իր յիշատակը դեռ կենդանի կը պահուի Փարիզի դիւաններուն և մեր երկու մատենադարանաց մէջ, այն է ազգային մատենադարանին և Սէնթ—Ժընրվիէի մատենադարանին մէջ, ուր կը կենան այն բոլոր ձեռագիր մատենաները՝ զորոս Աւետիք երկար լսնտարկութեան պարապ ժամերուն մէջ օրինակած է:

Աւետիք Պատրիարքին վերաբերեալ բոլոր պաշտօնական գիրերը հաւաքելէ զատ՝ անոր ձեռագրաց մէջն ալ ամենէն կարեւոր և շայնկան երեւցածն են ընտրանք օրինակած նմ., Ատոնցմէ առաջինը՝ զոր հրատարակութեան արժանի կը համարիմ, իր կենաց պատմութիւնն է, որ ամբողջապէս իր զրէնն կրած է: Եթէ խորհի մէկը թէ այն կենսագրութիւնը Պասթիլի արժուէն կասկածոտ բանտապաններուն հսկողութեան ներքեւ դրուած է, դիւրաւ կրնայ մեկնել տարաբաղդ Աւետիք Պատրիարքին ամեն բան յայտնապէս և ուղածին պէս չկրնալ գրելու հարկադրեալ ըլլալն յառաջ եկած զգուշաւորութիւնը*): Բայց նս

(*) Շատ հաւանական է որ Աւետիք Պատրիարքի կենսագրութեան ինչ ինչ մասերն ալ զինքը շարաւոր ճիշդութեամբ ներշնչութեամբ դրուած ըլլան: Վասն զի ինչուի գէթ է ընդունել թէ Աւետիք իր և Պատրիարքութեան ժամանակ կաթողիկ եկեղեցւոյ վարդապետութիւններէն ու ծեսերէն մեկ քանին ընդունած ըլլար ու գաղտնաբար գործածէր, ինչպէս որ ըստած է իր կենսագրութեան մէջ:

Նիւթ այնպէս ըլլար, կաթողիկոսաց և ճիշդութեամբ բարեկամ եղած կըլլար, և հետեւապէս բնաւ պատճառ չէր մնար Գաղղիոյ դեպարտին և ճիշդութեամբ սխեմիս թշնամութեանն ու դժմախիտ դաւադրութեանը, որոյ մէջ Լուի Ժ. Ի. պէս մեծ թագաւոր մ'ալ մատ ունեցած է: Կոմսայէս բնաւ հարկ չէր մնար Պասթիլի բանտին մէջ կաթողիկ կրօնի վարդապետութիւններն անոր սովորեցնելու և Հայաստանեայց կրօնըն ուրացնելու համար այնչափ ջանքեր ընելու, երբոր Աւետիք արդէն իր պատրիարքութեան ժամանակ Հռովմ' պապն եկեղեցւոյ դուռն ձանլած, բոլորման վարդապետութիւնն ընդունած, և բաժակին մէջ գաղտնաբար չուր խառնելու ձեռնարկած ըլլար, որովհետեւ արդէն կաթողիկ եղած ըսել էր:

Այս հակասական պարագաները նկատելով իրաւունք չէ՞ր ունենար կասկածելու թէ կենսագրութեան ինչ ինչ մասերը ճիշդութեամբ ազգայնութեամբ գրած է զժողովրդ բանտարկեալը:

անոր լուծեամբ անցած և չը յիշած իրողութիւններէն ու պարագաներէն մէկ քանին՝ ձեռքս գտնուած վաւերական և ստոյգ թուղթերէն քաղելով՝ նշանակած եմ՝ այս յառաջաբան տեղեկութեանս մէջ:

Ահաւասիկ յիշեալ կենսագրութիւնը, զոր ճշտութիւն օրինակած եմ՝ հեղինակին բուն խօսքերովն և ուղղագրութեամբ՝ զորս անսխալութեամբ պահելի, թէ և բազմաթիւ սխալներ կը տեսնուին անոնց մէջ:

ԷՏ. ՏԻԽԼՈՐԻԷ:

«Պատմութիւն Աւերակի Արարչական խնամքի» Մանկա-և Կուսարներէն պիտի Պատմութիւն Աւերակի և Սուրբ Երանանքի յառաջնորդութիւնէն, :

Ես Աւերակ Արարչական յարհայտնողու Սուրբ Երանանքի Տեառն եղբոր սուրբ Յակոբազը խաղրին Հայոց ազգին վանկին, ծնա ի հօրէն և ի մօրէն ի մայրաքաղաքն Թոփսաթ. հօրս անունն Պաղտատար, մօրս անունն Սուլթան, պապուս անունն տէր Սարգիս ծեր քահանայ. ի սուրբ Քառասուն եկեղեցի ընկալայ զսուրբն մկրտութիւն անուան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամեն. մկրտող քահանային անուն տէր Պետրոս, գրկող կնքահօրս անունն Պօղոս, և ի թվին Հայոց ՌՃԶ ապրիլ ամսոյ է. որ էր Հայոց տօնախմբութեան օրն սուրբ Գարրիէլի աւետման սուրբ Մարիամու ետ ողջոյն. նոյն օրն Քառասուն Մանկան եկեղեցւոյ աւագանն ընկալայ զսուրբ զրոյն կնքման և օծմամբ սուրբ մեռնաւ, շնորհիւ սուրբ Հոգւոյն ազատեցաւ սկզբնական մեղացն յԱդամա և կոշեցայ որդեգիր Հօրն յերկնաւորի և զՏէրն մեր Յիսուս Քրիստոս զԱստուածն մեր զգեցաւ իրրեւ զհանդերձ և առի զսուրբ խաչն փրկչական, զէն քառասայրի սրեալ սուրբ յարիւմը Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի պատերազմիլ ընդդէմ անեւրեյթ թշնամոյն. և եպիսկոպոս քաղաքին էր Ովանէս վարդապետ, և կաթողիկոսն սուրբ Էջմիածնա էր Յակոբ կաթողիկոս ճուղայեցի. իմ պապուս տէր Սարգիս քահանայի մօտ կարգացի մինչ ի արքունա հասակի է. ամաց, ճԺ. տարոյ մեռաւ պապս. զիս մկրտող տէր Պետրոս

քահանային մօտ կարգացի է. տարի. հայրս Զուլահակ էր. ուսա զարհեստ հօրս և ուսա զղու մաշ զործելն, և պապս զիս չի մեռած մինչ կենդանի էր՝ ուսման Պօլճաթաւրի աղջկան հետ նշանեց զիս. եղէ ժե տարոյ, եկն Պէլէնկցի Յակոբ վարդապետն ի Թոփսաթ, քարոզէր զաւետարանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ պատմեաց զհարիւրաւոր յարքայութիւնն կուսանաց խոստացեալ Քրիստոսի Աստուծոյ մերոյ և պատմեաց զվարսն կամաւոր աղքատաց Ռհաննու և Ալէքսիանոսի:

Յայնժամ ծագեաց սիրտն իմ զսէր սուրբ յարքայութեան և փափագմամբ սրտիւ բորբոքմամբ սիրով բոլոր հաւատով յուսով և սիրով թողի և հրաժարեցայ յաշխարհիս ցանկութենէ, ի հօրէ, ի մօրէ, յաղագականաց, նշանածէ և ի տանց, գնացի ի հետ այն Պէլէնկցի Յակոբ վարդապետին. մինչ Գ. տարի ծառայեցի նորա և կարգացի զԱստուածաշունչն, Հին և Նոր կտակարանք ըստաղլ-լութեամբ հոգւոյն սրբոյ. յետ երեց ամաց գնացաք ի Փայաս, Սուրբ Սարգիս անուն եկեղեցի ծովեզրին, անդ շնորհեաց մեզ Բ. աստիճան կիսասարկաւագութեան և տիպքր սարկաւագութեան, և անտի գնացաք ի Սերասթիա. և եկեալ անդ Ս. Էջմիածնա կաթողիկոսն Յակոբ, ես և զիմ վարդապետն ծառայեցաք նմա. անտի գնացաք ի Թոփսաթ, զմեզ նուիրակ ուղարկեց նիկիսառ, Ամասիա, Մարդըվան, Զիլէ, կատարեցաք զգործն. յոյժ սիրեաց զմեզ, զիր ետուր ինձ գնալ ի Ս. Էջմիածին, և ինքն և վարդապետս իմ գնացին ի Կոստանդնուպօլիս, և անդ մեռան, և ես մեղաւորս հետ Երուսաղէմացի Սահակ վարդապետին գնացաք ի Երզնկան, որ է զաւառ եկեղեցաց, գնալ ի Սուրբ Էջմիածին. եկն Յակոբ Կաթողիկոսին Շաթու Յակոբ թղթերով, խապար երբ թէ Յակոբ Կաթողիկոսն այլ մեռաւ. Պէլէնկցի Յակոբ վարդապետն այլ մեռաւ, Երզնկացի Յակոբ վարդապետն և Մոկացի Յակոբ վարդապետն և Երուսաղէմացի Սահակ վարդապետն օրհնեցին զիս արեղա, ետ Սահակ վարդապետն կարգ քահանայութեան, և եղին ի վանքն ի Սեպուհ լեռն Կապոռու Սուրբ Յակոբա Մըծրնայ Հայրապետին վանքն յառաջնորդ հայր վանացն, և ետուն իշխանութիւն քարոզելու Աւետարան Յիսուսի Քր-

րիտտոսի յԱստուծոյ մերոյ, Բ տարի Էջմիածին մնաց առանց կաթողիկոսի, և Եղիազար կաթողիկոսն, որ էր Պատրիարք Սուրբ յԵրուսաղէմա զոր Ս. Եակոբ վանքն Հռոմ ազնն զապթ էր արեր, ազատեաց և բազում շէնք շինեաց և պարտուց ազատեաց և զԵղիա վարդապետն Գ Եպիսկոպոսք գրով և պարզեօք ուղարկեաց ի Հռոմ Բ պատճառի. Ա. որ հնազանդութեան և սիրոյ միարանութեան և մէկ այլ յԵրուսաղէմայ գնացող ուխտաւորաց նաւ խոռանութն էր առեր յայնժամ. յորժամ գնաց Եղիա վարդապետն եհաս ի Հռոմ առ Ս. յաթոռն մայր սուրբ եկեղեցի Հռոմայ և երկրպագեաց ոտ սրբազան Փափին յոյժ ուրախութեամբ ընկալաւ և սրբազան Փափն. ուղարկեաց Եղիազար կաթողիկոսին գիր օրհնութեան և սիրոյ, լաւ ականակուռ և մարգարտազարդ մէկ թագ, Ա զաւազան, Ա Խաչ, և Եղիազար կաթողիկոսն յոյժ մեծ ուրախութիւն արար. և բազում շէնք շինեաց ի Սուրբ Էջմիածին մեծ կաթողիկէ զըմբէթ եկեղեցւոյ, զԳայանէ վանքն, Երեւանայ եկեղեցին, Էջմիածնա Փառսն, Գ զանկակապուռքն, խան թանապներ. և նորին հրամանաւ գնացի Երզնկան, եւ այլ կարողութեամբ և զօրութեամբ ամենակարողին յԱստուծոյ շինեցի Վապոսու Սուրբ Եակոբայ վանքն ըզպարիսպն և զխցնիրն և տներն կատարեալ, և Տիրանաշինու Ս. Նշանու վանաց զպարիսպն նորոգեցի և եկեալ Տաճկին մեծաւորէն՝ սորա հօրէն հրաման առի գնացի Երզնկա քաղաքին Մարիամ Սուրբ Աստուածածնա անուամբ հանդեալ եկեղեցին, որ մեծ շարժին փլեալ էր, կարողութեամբ ամենասուրբ երրորդութեան հօր և որդոյ և հօգւոյն սրբոյ ի հիմանէ նոր շինեցի երեք խորանաւ, միջինն Թաթար Մարտիրոս վարդապետն հրամանաւ առաւ վանքն այն. այլ կամեցաւ ի Հռոմ (վասն միաբանութեան և հնազանդութեան Փափին Հռոմայ), եկն Իզմիր Է վարդապետք զոր անուանք վարդապետացն այս է, Մինաս վարդապետն, Սուքիաս վարդապետն, Նահապետ վարդապետն որ եղև կաթողիկոս, մեռաւ, Չորգան Խաչատուր վարդապետն, Քուրթ Սիմօն Եպիսկոպոսն Հալպցի, Ուլանէս Եպիսկոպոսն և այլ փոքրաւորք ԺԲ, Իզմիր Ապրօ Զէնէպուն որդի

Մաթուսաղայի ձեռքն նաւ բռնեց պատրաստութիւն ետես. զահարան եղիր, զի տիմտան էր նաւն, յաջողակ հողմայ կու սպասէր, յանկարծակի եկն Էջմիածնա Ագուլեցի Պետրոս վարդապետն հանդերձ Գ Եպիսկոպոսք արգով մահաարով ձուղայեցւոց բովանդակ Աճէմիստանու մեծամեծաց և փոքունց, աղերսանօք Եղիազար կաթողիկոսն հրաւիրեաց քնալ նստիլ ի Ս. Էջմիածին Պատրիարք վախճանեալ Եակոբ Վաթողիկոսին տեղ. Իզմիրու եղեալ Աճնա Պաղիրկեան վաճառականքն ևս յոյժ աղաչեցին, դարձեալ ի Հռոմ ճանապարհէն, գնաց նստաւ ի սուրբ Էջմիածին, ևս պարզեօք զէմ գնացաք ի սուրբ Էջմիածին, նստաւ անդ Հայոց կաթողիկոս անուն սուրբ Աստուածածնայ, աջակողմ սուրբ Ուլանու Մկրտչին, ձախմէ սուրբ Ստեփաննոսին. և Ա եկեղեցի այլ Նէքքի Բասէն Պապա քէյիւն բնաւ չունէին եկեղեցի, նոր շինեցաք յողորմութեամբն յԱստուծոյ, այն եկեղեցեաց պատճառաւ վերաս պարտք Ռ զըշ. ի Երզնկան գնացի, ի Վրմիւշխանա, ծերունի մաքուր սուրբ մարդ մի էր Վրմիւշխանացի Սահակ վարդապետն, ի նորանէ առի զմեծ գաւազան ընդհանրական և անտի գնացի կրկին ի սուրբ Էջմիածին, էի ԼԳ ամաց. Եղիազար կաթողիկոսն յոյժ սիրեաց վասն շինարարութեան վանօրէից և եկեղեցեաց, անդէն ձեռնադրեաց զանրժոռն Եպիսկոպոս և ետուր յարհիական իշխանութիւն, և միւսում օրն, որ էր կիրակի, մեծաւ ցնծութեամբ պատարագ տվաւ ինչ և զայն թագն զոր սրբազան Փափն Հռոմա պարգևք յաղարկալ էր, զայն ի զլուխ եղիր, թէ օրհնութիւնն իջանէ զլստոյ, ամեն. ինձ պատվէր Գ բան. Ա. հնազանդիլ Փափին զի քահանայապետին Քրիտտոսի փոխանորդ քահանայապետ է. Բ և զբաժակն ջուր խառնել ծածուկ, զի մի խոռովութիւն լիցի ի մէջ ժողովուրդեան. Գ. զի Հայոց ազնն ոմանք զսուրբ Հոգին Աստուած ի հօրէն բղխէ և ի յորդոյ աննուսեն. այլ ինձ այնպէս պատվէր ետ թէ այսու հետեւ մի ասեր այդպէս, այլ և սուրբ հոգին Աստուած ճշմարիտ բղխումն ի հօրէ և ի յորդոյ անհատաբար այս է Վաթողիկ հոմանա դաւանութիւնն. առի զօրհնութիւնն գնացի Երզնկան վանքն նստայ

(Շարունակել)